

րէջ չկրնայիլ երթալ, չարժական հիւսնագարանի մը մէջ կը դարձանուի:

«Բեդրսպուրկի յունական դեսպանն Աթէնք եկաւ կարեւոր առաջարկութիւններ բերելով:

«Աթրաքսիոսի կողմէ խոսքին նայելով՝ Պ. Պրայիլասի պաշտօն յանձնուել է յայտնել Հելլենական կառավարութեան թէ՛ Ռուսիա ամեն պարագայի մէջ նկատողութեան պիտի առնուի Հելլենական կառավարութեան բարձրագոյններն Արեւելեան խնդրոյն կարգադրութեան ժամանակ, Ռուսիա անմիջական դարձուցուած չլինելու Յունաստանէն. այլ այն ժամանակ միայն պատերազմի մասնակցելու կը հրաւիրէ, երբոր մօտակայ հաշտութիւն մը կարելի չըլլայ, ինչպէս նաեւ երբոր Բ. Դուռըն իւր դիմագրութիւնը շարունակէ նոյն իսկ Աթրիանուպօլսոյ անկումէն ետեւ:

Վիեննայէն հետեւեալը կը դրեն Բօլոյնի կազմէ լրագրին:

«Հոս ստոյգ տեղեկութիւն ունեցող ակումբներու մէջ կըսուի թէ Ռուսիա՝ այն ժամանակ միայն պիտի հաճի խաղաղական բանակցութեանց համար, զինուոր չնորհել, երբ թուրքիա Սիլիսթրիէն, Ռուսսուքը և Վիտինը պարպէ:

«Կաւեյնքն թէ Գարգանէյի նեղուցէն ազատ անցուդարձը, Հայաստանի Ռուսաց թողութիւնը, Պուլղաբիոյ, Ռումանիոյ և Սերվիոյ անկախութիւնն և Գարատաղի ընդարձակումը խաղաղութեան պայմաններուն մէջ են, որոնցմէ ետ կենալ չուզեր Ռուսիա և որոց հաւանութիւն տուած են Գերմանիա և Աւստրիա: Եթէ թուրքիա այս պայմանները չընդունի, պատերազմը պիտի շարունակէ:

«Հիմայ բացայայտ կերպիւ կը զրուցուի թէ ոչ թուրքիայ ամբողջութեան և ոչ իսկ անոր հաստատ պահելուն հաւատացող կայ: Հոս դրեթէ իրեւ ստոյգ կը նկատուի թէ Պոնտ և Հէրսէք քիչ ժամանակէն Աւստրիոյ պիտի անցնին:

Կարինէն եկած լուրերը կը ծանուցանեն թէ Ռուսք նոյն դիրքերը բռնած են միշտ քաղաքին առջեւ. բայց առատ ձիւն գալով ճանրաները դոցած ըլլալուն պատճառաւ՝ զինւորական գործողութիւնք դադարած են. ցուրտը վերջին աստիճան սառեալ է, այնպէս որ յիսուն տարիէ ՚ի վեր նմանը տեսնուած չէ եղեր, Վառնա քաղաք բնաւ չ'կայ, և նպարներուն դինը տարապայման բարձրացած է: Այս վիճակին երեսէն ժողովուրդը մեծ նեղութիւն կը կրէ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 21 դեկտ. Լոնտայէն եկած հեռագրեր կը ծանուցանեն թէ Անգղիա՝ Ռուսո—Գերմանական զինատարութիւնը խորտակել կուզէ:

Լոնտա 21 դեկտ. Թնդանթներ զրկուեցան Մալթա: Պուրքէ 21 դեկտ. Ալեքսանդր կայսրն հեռագիր մը ուղղեց Ռումանիոյ իշխանուհոյն՝ շնորհակալ ըլլալով իրեն ըրած ընդունելութեանն, միանգամայն քիչ ժամանակէն ազդու և փառաւոր հաշտութիւն մը կընքուելու փափաք կը յայտնէ:

22 թիւնէ 21 դեկտ. Նիքիթա իշխանը յանակնկալ մերքաղաքն եկաւ:

Բեդրսպուրկ 21 դեկտ. Կայսրը վաղը մեր քաղաքը կապառուի: Լրագիրը շատ զրգուած են Անգլիոյ բռնած ընթացքէն:

Պէրլին 21 դեկտ. Կիյեով կայսրն երկրթի խաչին պատուանշանը շնորհեց Ռումանիոյ Կարոլոս իշխանին:

Փարիզ 22 դեկտ. Գաղղիոյ կառավարութիւնն Անգլիոյ միջամտական փորձերուն կ'աջակցի: Լոնտա 22 դեկտ. Քանի մը լրագիրք կը ծանուցանեն թէ՛ Անգղիա թէ՛ Արեւելքի պատերազմուղաց մէջ մտնելու մասին քաջաւերական պատասխան մը չէ կրցած ստանալ. բայց և այնպէս իւր բանակցութիւնները կը շարունակէ՝ միանգամայն գործողութեան պատրաստուելով:

Բեդրսպուրկ 22 դեկտ. Ալեքսանդր կայսրն այսօր Բեդրքսպուրկ հասաւ:

Լոնտա 22 դեկտ. Այսօր նախարարաց արտաքին կարգի խորհուրդը գումարեցաւ ՚ի Ռիւսսօր թագուհոյն նախագահութեամբ: Պաշտօնական ծանուցում մը յունվար 17 ին խորհրդարանը կը դուրսարէ ստիպողական և կարեւոր գործոց պատահաւ:

Կը հաստատուի թէ կառավարութիւնը խորհրդարանէն դրամ պիտի խնդրէ Արեւելք մէջ գործելու պատահականութեան համար:

Փարիզ 22 դեկտ. Պ. Ալէն—Վալիէ Պէրլինի դեսպան անուանեցաւ:

Փարիզ 23 դեկտ. Թաղապետական խորհրդոց ընտրութիւններն յունվար 6 ին պիտի կատարուին բովանդակ Գաղղիոյ մէջ:

Լոնտա 22 դեկտ.

Օսմ. Բօնա.	8 11/16
Փրիւ.	1865 9
»	1869 8 9/16
»	1871 34 1/4
»	1872 15
»	1873 8 1/2
» Եղիպտ.	54 3/4
Անգլ. Բօնա.	94 11/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ Բարձրագոյն հրամանաւ խառն յանձնաժողով մը կազմուել է՝ քաղաքային զինուորութեան վերաբերեալ կանոնադրութեան ինչ ինչ կէտերը բարեփոխելու ծրագիր մը պատրաստելու պաշտօնով:

Յիշեալ ծրագիրը կայսերական հաւանութեան պիտի ներկայի:

Սոյն խառն մասնաժողովոյ անդամ ընտրուած են Հայոց ազգէն Վահմ. Սէրվիլէն և փորձու գայեան Միքայէլ Էֆէնտիններն:

Քաղաքային զինուորութեան խնդրոյն նկատմամբ Յունաց պատրիարքին պատրաստած և Բ. Դրան հաւանութիւնն ստացած շրջաբերականը կիրակի օրը մայրաքաղաքի Յօյն եկեղեցեաց մէջ կարգացուեցաւ, և յօռնուի նայելով՝ քանի մը յոյն եկեղեցեաց մէջ յիշեալ կոնգրակին ընթերցումն արգիւրելու փորձ եղեր և մինչև իսկ պատրիարքին անկումը պահանջուել է:

Մայրաքաղաքի թուրք լրագիրները կը ծանուցանեն թէ Մօլլա Խամէթ Հիւսէյին Էֆէնտի անուն չընդկատանցի երեւի իսլամ մ'եկեր է Կ. Պօլիս՝ Հնգկատանի Մահմետական ժողովրդոց կողմէ, որպէս զի մայրաքաղաքս նստելով, Հնգկատանէն հեռզհետէ եկած դրամական օգնութիւններն ստանայ և սահմանաւոր տեղը յանձնէ:

Յիշեալ Խամէթ Հիւսէյին Էֆէնտին կայսերական կառավարութեան հիւր եղած է, և Կ. Պօլիս գալէն ՚ի վեր քանի մ'անգամ տեսակցեցաւ Մեծ—Էպարքոսին և այլ նախարարաց հետ:

Կը լսենք թէ Աւստրիական Լայտի շոգենաւները՝ Վարնայի հետ հաղորդակցութիւնը դադարեցուցեր են:

Կարսի քաղաքային կառավարիչ Նէֆիք փաշան, ինչպէս նաեւ Նայիպն և քաղաքային իշխանութեան բոլոր ուրիշ պաշտօնատարները՝ Լորիս Մէլիքօֆ զօրավարին հրամանաւ արձակուելով՝ շարաթ օրը մայրաքաղաքս հասան:

Յաւելով կը լսենք թէ Նոր Դար օրագիրը բարձրագոյն հրամանաւ անսահման կերպիւ դադարել է:

Հէվանթ Հէրալտ լրագիրն իւր դեկտ. 7/19 թիւ թերթին մէջ Բ. Դրան նախարարներէն միոյն դէմ թշնամայիլ յօդուած մը հրատարակած ըլլալով, տպագրական տեսչութիւնը իր ղեկավարութիւն մ'ըրաւ յիշեալ լրագրին որ եթէ միւսանգամ՝ այնպիսի լեզու դուրսածէ, ամենախիստ պատժոց պիտի ենթարկի:

Շաբաթ առաւօտ Հայ վաճառական մը Գարագեղի կամուրջին վրայ կառքէ մը զարնուելով ինկաւ և կառքին անիւներէն մին թեւին վերայէն անցաւ:

Վերադառնալ վաճառականն ոտիկանութեան խնամք իւր տունը զրկուեցաւ, իսկ կառապանը բռնուելով բանտարկեցաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

12 դեկտ. երկուշաբթի իրկուն	9,12
13 դեկտ. երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	
ժամ 6 ին	

Բուսնիկի երկաթուղի	Ֆր. 24
Թղթագրամ	Լր. 257 20

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԱԹՊՈՑ

Կ. Պօլիս 12 դեկտեմբեր

Ստիւթէ ձէնէրալի բաժ.	Անգլ. Լր.	3,15
» ֆոխտանկութեան		2,25
Կ. Պօլսոյ Պանքային		3,
Քրէտի ձէնէրալ		2,35
Քրէտի Օսթրո—թիւրք		—
Փրիւ.	1863	Ֆր. 40
»	1865	» 40
»	1869	» 37
»	1872	» 14
»	1873	» 36
Թրամուայ	Օսմ. Լր.	0 80

ԸՆԹԱՑՔ ԳՐԱՄՈՑ

12 դեկտեմբեր

Անգլ. Լրա	ըր.	108 35
Նաթօլոն սակի		» 86 22
Խրէտիսլ Ռուս		» 87 30
Գլըբօլի		» 54 10
Հինգ Ֆրանք		» —
Հինգ Նոյ		» 119 20
Պլինն		» 168

Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ

Այսօր Ս. Պատրիարք հօր նախագահութեան ներքեւ Գաղ. ժողովոյ գիւտանն ՚ի նիստ պիտի դուրսարի և զինուորական խնդրոյն նկատմամբ եկեղեցական Համագումար ժողովոյ յայտնած վարձեաց վրայ պիտի խորհի:

Սոյն նստին հրաւիրեալ են նաեւ Ամեն. Խորիման Սրբազան և Գեր. Խորէն և Մատթէոս Եպիսկոպոսներ:

Կը լսենք թէ Ս. Պատրիարք հայրն իւր հրաժարականին վրայ պնդելէ դադարած չըլլալով, Վարնութիւնը պիտի պարտաւորի խնդրին Սղգ. ժողո-

վոյ պիտի ներկայէ, եթէ Ն. Սրբաղնութիւնը միջեւ այս ուրաթ չբարեհաճի յետս կոչել:

Ստոյգ է որ Ն. Սրբաղնութիւնն հիւանդ է և չկրնար ընթացիկ գործերով զբաղիլ. բայց կրնայ իւր վըստահութեանն արժանի բանիքուն եկեղեցական մ'առժամանակեայ կերպիւ տեղապահ կարգել:

Կը յուսանք որ Ն. Սրբաղնութիւնն այսպէս վերջ կուտայ զՍղգն յուղող հրաժարականի խնդրոյն, որ իրաւամբ տարածամէջ ներկայ տաղնապալից պարագաներուն մէջ, ուր ազգն ամեն ժամանակէ աւելի պէտք ունի իւր խոհական ազգասիրութեան:

Կը յիշեն ընթերցողք թէ անցեալ շաբթու մայրաքաղաքիս հասարակութեան մէջ զորոյց մը տարածւած էր թէ Կարնոյ առաջնորդ Գեր. Յարութիւն Եպիսկոպոսն իւր թէ կախուեր, և մեր ազգայիններէն ումանք ալ սպաննուեր են՝ և այլն:

Թէև այս զրոյցին անտեղութիւնն ինքնին յայտնի է, բայց և այնպէս Ս. Պատրիարք հայրը Բ. Դոնէն տեղեկութիւն խնդրելով՝ անհիմն ըլլալն ստուգեց, միանգամայն հեռագրաւ տեղեկութիւն ուղեց կարինէն:

Երէկ կարնոյ առաջնորդ Գեր. Յարութիւն Եպիսկոպոսէն Պատրիարքարան եկած մասնաւոր հեռագիր մը բնաւ տարակոյս չթողուր յիշեալ զրոյցին անհիմն ըլլալուն վրայ:

Ահաւասիկ հեռագրին պատճէնը.

Տէր սատեթթատէ Էրմէնի Պաթրիկիկինէ:

Ան էր զրուամ. Մէհմետի իշխն կէօնտէրլիէն փոխա վիսուլ պուլաք. վիճուածէ սաղ սէլիմի:

11 դեկտ. 1877 Մէրխասայի Էրմէնեան Գալուստի Եպիսկոպոս

Արապկիրէն առ Ամեն. Ս. Պատրիարք հայրն քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տէրսիմի վայրագ քիւրտերէն 500 ի չափ խուժուած անձինք Արապկիրի շրջակայ Հայ գիւղօրէից բնակիչներէն մեծագումար տուրք պահանջեր են՝ իրենց դուրքը զարնելու սպառնալիքօ:

Սոյն հեռագիրը Ս. Պատրիարք հայրն անմիջապէս Բ. Դուռը զրկեց՝ արագ և ազգու տնօրէնութիւն մը խնդրելով:

Ահաւասիկ Սթամպուլի գրած յօդուածը, զոր Մէհմետայի Հալախա ամբողջապէս հայերէնի թարգմանած է:

«Ներկայ տաղնապալից կացութեան մէջ, Գրիստոնէիցմէ քաղաքապահ զինուոր տնտեսու խնդրին ալ սկսաւ ոչ նուազ մտազբաղում պատճառել:

«Գիւրգաղաբար ցաւ է ըսել որ քրիստոնեայք աչգ մասին կամայ կամայ թոյլ կը վարուին, այլ սակայն այլ այժմ՝ աղէկ չփախչիր ոյգ մա. սին բժականութիւնները ընել՝ որք եթէ ոչ անօգուտ գէթ ուրիշ ատեն մը աւելի օգտակար կրնային ըլլալ:

«Այսօրուան օրս Հայրնիքը վըտանդի մէջ ըլլալով, պէտք է որ տեսնութիւնը դադրին և ցաւ երն ու վիշտերը պահ մը մոռցուին՝ մինչև իսկ ենթադրելով թէ խիստ իրաւացի եղած ըլլան ատենք:

«Վտանդի տակ եղող հայրենեաց փրկութեան խնդրոյն առաջը՝ պէտք է այս անհամաձայնութեան զգացումները անհետ ըլլան:

«Այս առթիւ Հայ ժողովրդեան եկեղեցական համագումար ժողովին

ըրաժ որոշումը մեծ և ցաւալի զարմացում մը պատճառեց ամենուն ։

« Այս որոշումն է Հայոց մէջ ալ քաղաքացիական պատերազմի միջոցով իր ըրած բացէ՛ր բաց մերժումը ։

« Հայ կղերին իր վրայ հրաւիրած պատասխանատուութիւնը մեր ընթերցողաց լաւ մը մտնել տալու համար, պարտք կը համարվի ինչ պայմանաւ դորա իր կամքը յայտնելու հրաւիրուած ըլլալը բացատրել ։

« Հայոց Ընդհ. ժողովը՝ զինուորութեան սկզբունքը ընդունած, բայց իւր այս որոշումը եկեղեցական Համագումար ժողովոյ յղած էր, որպէս զի սա՛ խնդրոյն մանրամասնութիւնը խորհրդածութեան առնելով՝ քաղաքացիական զօրաց կազմակերպութեանը համար Բ. Դրան ներկայացուելիք բրօկրամին հիմը պատրաստէ ։

« Արդ եկեղեցական Համագումար ժողովը պատասխաններ է թէ այդ խնդրներովը չլինար զբաղել որովհետեւ իր հօտին զինուորագրութեան սկզբունքը բացէ՛ր բաց կը մերժէ ինքը ։

« Այսպիսի որոշում միեղած ըլլալուն մարդուս հաւատարմ չգար, եթէ մարդ չգիտնայ թէ կղերը ինչեր չկրնար ընել երբեմն ։

« Բայց չեմք ուզեր այդ մասին մեր կարծիքը յայտնել ։ Մեր կը կարծենք թէ ամենափոքր մէկ մասն մը ըրած որոշումն է՝ դա, և թէ նոյն իսկ Հայ ժողովուրդը այդ որոշման հակառակ կամք մը պիտի յայտնէ ։

« Իրոք ալ, մեզ տրուած տեղեկութեանց նայելով, եկեղեցական Համագումար ժողովը ըրած որոշումը կրկին երկամիտական ժողովոյ պիտի ներկայանայ, որոյ մէջ շատ մ'աշխարհականներ ալ կան, և այս ժողովն անշուշտ սոյն անպատեհ որոշումը պիտի մերժէ ։

« Ուրեմն կը՝ յիշեմք թէ իր անաշխարհականութեամբ, որն որ մնա օրէն տեղի պիտի ունենայ, որովհետեւ ան ժամանակը ուղի է, երեսիւ ժողովը՝ եկեղեցական Համագումար ժողովոյ ըրած սոյն անամօթ և ամբարիշտ որոշմանը դէմ ազդու կերպով պիտի բողբէ ։

« Թող Հայերը քաջ գիտնան թէ սոյն որոշման կամակից գտնուելով, ոչ միայն քաղաքակրթեալ աշխարհի անարգանացը պիտի արժանանան, այլ և կառավարութեան իրաւացի հակակրօնութիւնը իրենց վրայ պիտի հրաւիրեն, և բոլոր միւս ժողովրդաց տաեւութիւնը պիտի դժգոյս տարարած պիտի ըլլայ թէ, իրաւանց և պարտուց հաւասարութիւնն ստանալու նպատակաւ իր ըրած բոլոր պահանջները կեղծիք և շաղկապութիւն միայն էին ։

« Վերջապէս այդ կերպով իր Պատրիարքին դէմ՝ գլուխ վերցուցած պիտի ըլլայ, որով կառավարութիւնը զիրենք խախտ պատժելու իրաւունք պիտի ունենայ ։

« Չեմք ուզեր դարձեալ կրկնել թէ Հայ ազգը սրճափ ապերախտ գտնուած պիտի ըլլայ՝ եթէ մերժէ պաշտպանել այնպիսի երկիր մը՝ ուր այնքան ատենէ ի վեր կ'ապրի, և այնպիսի կառավարութիւն մը՝ որ վեհաճառարար զիրենք իր վարչական գործոցը մէջ ընդունած և իրենցմէ շատերուն մեծ հարստութեան տէր ըլլալու միջոցներ հայթայթած է ։

« Հոս ահա կանգ կ'առնու՞մք՝ Հայոց ազգին քննադատութեան նիւթ ըլլալը պատճառաւ կետերը մի տուի թուելէ, որն որ անհրաժեշտ պիտի ըլլայ՝ օւրիշէն թելադրուած այսպիսի վատութիւն մը ընելէ ետեւ և

կը յուսամք թէ երեսփ. ժողովը բացէ՛ր բաց պիտի բողբէ այն վատութեան դէմ՝ որով իր ներկայացուցած ժողովուրդը վատահամբաւել փորձած են ։

« Կ'սուտմք թէ վերջապէս Հայոց ազգն ալ Յոյն ժողովրդեան օրինակին պիտի հետեւի, որն որ հաւատարմութեամբ վարուելով՝ զինուորագրութեան սկզբունքը ընդունեց, և այդ մասին մայրաքաղաքի մէջ գրաւուող Յոյն եկեղեցիները զրկելու համար պատրաստած շրջաբերականը Բ. Դրան հաւանութեանը ներկայացուց ։

« Խօսքերնիս վերջացնելով հոս՝ հարկ կ'համարինք սա ալ տեսլիկութիւն՝ առանց քանի մը մտնեալ կամ տգէտ քահանաներու թոյլատուութեանն սպասելով, որդէն քանի մը երիտասարդ հայեր իրենց ազատ կուսմբը քաղաքացիական զինուոր գրուելը են ։

« Շիտակը ըսելով կարմէ որ այս քանի մը երիտասարդաց անունները հոս յիշեմք, ինչպէս որ ալ երբ ժամանակը կայ պիտի ընեմք՝ ի պատիւ անոնց և յամեն իրենց երկրին ծառայել չուզողներուն ։

« Հարկ կը համարուի՞մք յիշել նաեւ թէ Ամեն. Ներսէս Պատրիարքը, որն որ դժբաղդաբար իր հրաժարականը տուած է, մեր պարտաւած ցաւալի որոշման մէջ ամենեւին մաս չունի ։

« Ընդհակառակն՝ սոյն եկեղեցական իւրաւաստեալ, ազատական և սուր միտք մ'ունենալով, Հայոց ազգին ճշմարիտ շահերն ու պարտքը սոյն ըլլալը ի վաղուց էանչեւ եւ այնպէս ցոյց տուած է ։ »

ՀԵՏԱՔՐԻՐՈՇԱԺ ԵՒ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԳԱՅԹԱԿՐԱԿԱՆ ԳՅՈՍ ՄԸ

Հումի դատական առեանը զարմանալի դատով մը կ'ընթացի, որ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ եղած է Եւրոպիոյ մէջ ։

Տիկին կոմսուհի Լամպլէրիին դատ բացած է վախճանեալ հուշակաւոր Անթոնէլի կարդինալին եղբարցն և այլ ժառանգներուն դէմ՝ պնդելով թէ ինքը կարդինալին բնական դաւանէ՛ր ։ Իրան տացի օրիորդէ մը ծնած, որոյ հետ Անթոնէլի կարդինալն ապօրէն յարաբերութեան մէջ կը գտնուի եղբ. հետեւաբար ինքն է անոր թողուցած մեծագույն մար հարստութեան ժառանգը ։ Կարդինալին եղբարցներն ալ Լամպլէրիին կոմսուհուհոյն մկրտութեան վկայականը ձեռնընդունելով հաստատեն թէ յիշեալ կոմսուհին 1855 հոկտեմբեր 1 ին ծնած և նոյն ամսոյն 25 ին Հումի Սանթա Մարիա եկեղեցին մկրտուելով՝ արձանագրուած է Լորէթա-Տօմինի-Ալիթի-Օրիա-Մարքոնի անուամբ՝ իրեն հարապառ դուստր Պ. Անճէլ-Մարքոնի չոր մկրտութեան ներկայ էր և տիկին Անթոնէլի-Պալէրինի ։ Եւ որովհետեւ իտալական քաղաքային օրինադրքին 1855 թ. յօդուածը կը արամադրէ թէ օրինաւոր հայր մը ունեցող մէկը չլինար որեւէ բնական հայր փնտռել իրեն, հետեւաբար կարդինալին եղբարցները կը պնդեն թէ Լամպլէրիին կոմսուհին ըստ օրինի չլինար կարդինալին դաւանէ՛ր եղած ըլլալու պահանջում ընել ։

Տիկին Լամպլէրիին կոմսուհուհոյն փաստաբաններն ալ կը պատասխանեն նախ թէ Իտալական քաղաքային օրինադրքին 175 թ. յօդուածին արամադրութիւնը ներկայ կանոնաց համեմատ չինուած ծընդդէման վկայականներուն վրայ հիմնեալ է և ոչ թէ պապական կառավարութեան օրով չինուած մկրտութեան վկայականներուն վրայ, որը երախայի մը մկրտութեան ըլլալը միայն հաստատուող զօրութիւն ունին ։ Երկրորդ ներկայ գտալին նիւթը բողբովին յատուկ բնութիւն մը ունին, որովհետեւ ոչ միայն Անճէլ-Մարիոնի հայր եղած չէ, այլ և անոր կինը Անթոնէլի-Պալէրինի սուտ աղբիւրք

կեղծած է, մինչդեռ բուն մայրը Իրան տացի օրիորդ մ'էր, և հայրն ալ կարդինալ Անթոնէլին ։ Արդ երթադրելով որ դատարանը այս երկու առարկութեանց առաջինն ընդունելով, մկրտութեան արձանագրութեան ըստ արդի օրինաց տրամադրութեան ծննդեան օրինաւոր վկայողի չհամարի, Լամպլէրիին կոմսուհին կը պարտաւորի հետեւեալ երեք կէտերը հաստատել ։

1. Թէ Պ. Տիկին Մարքոնի երբ հայրը ու մայրը եղած չեն ։ 2. Թէ իւր մայրն Անթոնէլի կարդինալին սերունդն իրան տացի օրիորդն է ։ 3. Թէ կարդինալը յիշեալ Իրան տացի օրիորդէն ծնած աղջիկը իրեն իւր դաւակը նկատած է ։ Այս երեք կէտերուն վրայ հետեւեալ փաստերն առաջ կը բերեն Լամպլէրիին կոմսուհուհոյն փաստաբանները ։

1. 1855ին Տիկին Մարքոնի՝ որ 1811ին ծնած է 44 տարեկան էր, իսկ այլը Պ. Մարքոնի որ 1785 ին ծնած է 69 տարեկան էր ։ Արդ ճշմարիտ չէ որ այս ետեւեալ անհամապատասխանութիւնն իր կըրտութեանը ներկայ գտնուած և մկրտութեան տուածն ալ ստորագրած ըլլայ՝ այլ անոր աները ձեռնադրելով Պալէրինի անուն ծերուկ մը ներկայ գտնուէր և ինքզինք Մարքոնի ձեռնադրելով անոր անուամբն ստորագրած էր ։ Այլ և այլ վկայութիւններէ և զխաւարապէս ձեռնադրել անուն մանկաբարձ կնոջ մը վկայութեամբ կը հաստատուի կրտութիւն 1855ին տիկին Մարքոնի՝ որ կարդինալ Անթոնէլիին հետ մտերիմ յարաբերութիւն ունէր, ձեռնադրել մանկաբարձին և Լաքինի բժշկին թելադրութեամբ յղուելուն կեղծեր է, որպէս զի Իրան տացի օրիորդին ծնանելիք մանկան մայրութիւնը իւր վրայ առնու, և գործը ծածկուի ։ Ասկէց զատ սա պարագան ալ յառաջ կը բերեն թէ կարդինալը երկու միլիոնէն աւելի ստակ տուեր է տիկին Մարքոնիին այս կեղծիքն յանձն առնելուն և ծնած մանուկը մեծցնելուն համար ։

2. Լամպլէրիին կոմսուհուհոյն ճշմարիտ մայրն Իրան տացի օրիորդ մը ըլլալուն գալով, Լամպլէրիին փաստաբանները կրտութիւն անոր ներկայ անունն ու վեհալը գիտեն ։ Ծանօթ քաղաքագէտի մը կինն է հիմա ։ Եթէ կարդինալ Անթոնէլիին ժառանգաց կողմէն պահանջուի պատրաստ են անունը յայտնելու ։ Յիշեալ օրիորդին 1855ին միջոցներն Անթոնէլի կարդինալին հետ ունեցած մտերմական յարաբերութիւնները, դատին ծննդաբերութիւնն և երախային անկէ առնուելով տիկին Մարքոնիին յանձնուելն ապացուանելու համար Լամպլէրիին կոմսուհուհոյն փաստաբաններն այլ և այլ վկայներ կը ցուցնեն զխաւարապէս ձեռնադրել մանկաբարձը, կարդինալին վաղեմի ունեւապահ թամպուրանին որ հիմա 70 տարեկան է, Վէնտիթի անուն քահանայ մը, եւ ։

3. Կարդինալ Անթոնէլիին հայրութեան կէտին գալով, այս մասին ապացոյցներն առատ են ։ Սուտ մայրն և անոր անունը նշելն ետեւ կը անդադար կը նեղէին կարդինալը ։ Կարդինալին մեռնելուն նախնիքայ չորն աղջիկը (Լամպլէրիին) կարդինալին խոստովանաւորութեան արձանագրութիւնը կրտութեան հարցումներն ուղղել է ։ Երախային մեծցնելու համար կարդինալին ըրած՝ քաղաք մ'աղբն և հետեւաբար հայրական հոգածութիւնը հաստատելու համար ամենէն զօրաւոր ապացոյցն է հետեւեալը ։ Տիկին Մարքոնի 1872 մարտ 12ին մեռնելով Լամպլէրիին օրիորդին խնամակալ կարգուել է կարդինալին կողմէ Պ. Գոթթիստի-Ծօլէ անուն խորապիւր մը, որուն կարդինալն անմիջապէս 100000 ֆրանք տուեր է իւր աղջիկը խնամելու համար ։

Տիկին Լամպլէրիին մէկ քանի նամակները կան, որը նոյնպէս Լամպլէրիին օրիորդին վրայ կարդինալին հայրական խնամք ունենալը կը հաստատեն ։ Այն խորագրիւր դեռ ներկայացած չէ դատական ատենին, ինչպէս նաեւ ձեռնադրել մանկաբարձը ։ Ատտի հիմա ամեն մարդ այս երկու վկայութիւնները մանրամասն յայտարարութիւններուն կ'ապաստեն հետաքրքրութեամբ ։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Իրենց զաւակաց բարեք դաստիարակութիւն մը տալ ուղղ պատուարժան ծնողաց կը ծանուցուի որ մայրաքաղաքիս կեդրոնական թաղերէն միոյն մէջ, ի Վէտիկ-Պալատ, հաստատուալ Սուրբ Երանցիկեայ և զիւրօթիկ երկսեռ վարժարանն իւր երկրորդ տարւոյ չըմանը մըտնելուն առթիւ բարձրագոյն վարժարանի ուղղութիւն առած է, և տասն և երեք մնայուն ու այցելու ուսուցիչներ կանոնադրապէս կ'աւանդեն Հայերէն, Գաղղիերէն, Տաճկ. և Անգլ. լեզուներէ՝ զատ, ուրիշ վարժարանաց մէջ ուսուցուած աւան անարկայ, միանգամայն տոմարաւ կալութիւն, բիւսօ, նօթա, մարմամարզ և Ռուսերէն լեզու կ'ամեցողաց ։ աղջկուք կուսանին նաեւ անոնին տնտեսութիւն ։ Գաղղիերէն խօսակցութիւնը արարատուորիչ է գրօսանաց և հանգստեան ատեններ ։ Բարեք մարքութեան կատարեալ խնամք կը տարուի ։

Սոյն վարժարանն իւր ծոցին մէջ ունի այժմէն 100ի շուրջ աշակերտք և աշակերտուհիք, որոց շատն հեռաւոր թաղերէ և գիւղերէ կը յաճախեն ։ Կանոնաւոր և կատարեալ դաստիարակութեան վրայ ազդին ունեցած սէրը՝ սոյն վարժարանին արդեամբ քաջաւերուելն յայտնի է, ուստի այլ ծնողք ևս որ սոյն հաստատութեան օգուտը քաղել կուզեն, կը հրաւիրուին դալ և Բրօկրամն ու կանոնադրել ընթերցելով զաւակին յանձնել ։

Վճարմանց համար սակարկութիւն չըլլալիւ արդէն գինեւոր որոշեալ են ։

ԹԱՏՐՈՆ ՕՐԹԱԿՐԻԿ

1877 դեկտ. 15 հինգշ. գիւրք մամ ճիւղ Գ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԻՆ

Ս Է Ր

ԱՌԱՆՅ ՀԱՄԱՐՄԱՆ

Թատերգութիւն 3 արար

ԳԷՇ ԱՏԵՆԻՅ ՏԱՐԵՐՈՒԹԻՒՆԸ

Գրեց ու շխտի երգէ Պ. Ս. ՌԶՏՈՒՆԻ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Թ Ո Ր Ո Ս Լ Ե Ւ Ո Ն Ի

ԳՐԵԱՅ ԾԵՐԵՆՅ

Սոյն գեղեցկահիւս վիպասանութեանն՝ որոյ պատմական աղբիւրը Ռուբինեան հարստութիւնէն առնուած է, և որ Գրիգորի 1445 թուականին՝ Հայոց կիլիկիոյ մէջ վերստին ձեռք բերած իշխանական մեծութեան ճշգրտաւար պատկերն է, ամեն Հայ պէտք է փութայ մի օրինակ ունենալ, կը ծախուի ամեն գրաւաճառաց քով գին 2 ֆրանք ։

ԽՈՐՀՈՐԴԻ ՀԱՆԴԻՍԻ

ԱՌԱՐԱՅԱՐՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ԳԷՇ Ե ԶԵՐԵՐ ԲԱՆ

Պօղոս Գ. Գիւրտուհեան

Սոյն դուշմութեայ երկասիրութեան երկրորդ տաղարկութիւնն, որ 32 երեսէ կը բաղկանայ, Նիւ Երան աղբիւնութեանը, գրաբայ սահուն ոճոյն ազգի ազգի զօղորդի խնամակար համար, կաղանդի նուէր և մրցանակաբաշխութեան մէկ հատիկ արժանաւոր պարգև համարուած է ։

Գինն է 3 դահկան ողջ թղթաղբիւր մը ։ Գարեցաց կաղանդի նուէրի համար մասնաւոր գեղջ կըլլայ ։

Կեդրոնաւոր զին է Գրատուն բարիգու Չաքմաքըրար Եօղ ու շուրջ Բալուրեան խան թիւ 13, և կը ծախուի բոլոր Հայ գրաւաճառաց քով ։

Տ Է Ք Ա Ր Դ Ա Յ

Ճ Ա Ռ Ո Ճ Ո Յ

Ե Ւ

ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԱՐՈՒԹԻՒՆՔ

Տէքարդ Գաղղիացի մեծանուն փիլիսոփային «Գլուխ գործոցն է, որ լինի ։ Առաքել ճարտարականին աշխատասիրութեամբ Հայերէնի թարգմանութեամբ՝ Արմաշու վանքէն հաստատուելով՝ իր անհատական արժանիքը և իր անհատական արժանիքը և իր անհատական արժանիքը ։ Այս գիրքը 272 երեսէ կը բաղկանայ և կը ծախուի Եւրոպայի Զինկիլիկէի ճառարի թիւ 2 թ. 1 և Երազման գրատունը և գրաւաճառաց քով ։

Գին 2 ֆրանք ։

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

ՊԱՐԶ ԵՒ ԲՆԴԱՐՁԱԿ

1878

ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Յօրինակ յերկու քառասունյե Խառնակ

ՊԱՐՈՒՆԱՆՈՒԹԻՒՆ

Օրացոյց պարզ

Ազգային Հոգեւոր գլուխ և Ընդհանուր Ժողով

Ազգային վարչութեան կրօնական և քաղաքական Ժողով

Ազգային զանազան Ժողովք, խորհուրդ և հոգաբարձութիւնք

Սկիզբն Օսմանեան տէրութեան : Օսմանեան կայսր և կայսերազունք :

Բարձրաստիճան նախարարք տէրութեան :

Հայազգի պաշտօնատարք 'ի Բ. Դուռն :

Թիւ մարդկան ընդ ամենայն երեսն երկրի :

Թիւ ազգիւն Հայոց :

Արժէք դրամոց զանազան ազգաց :

Ազգական գիւտի աւուր ամսամասի :

Համեմատութիւն Եւրոպայի և Տիւրքիայի :

Կր ծախուի լայր դրամաճառաց քով : պարզ 60 փարա, ընդարձակը 3 զուրուշ :

ԶԳՕՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Կ Ա Մ

Ն ՈՒՆ Կ Ա Ղ Ա Ն Դ Ի

Գրեց Փրֆրէն Եւսէ Կ. Պրֆրէն

Մանկանց մտքին ու որակին մեծ ազանց օգտակար հրահանգներով ու տեղեկութիւններով ի պատկեր ընդարձակ գիտելիքի գրքով մ'է, զոր ամեն որդեւեք ծնող կը պարտի գրնել և իւր զաւակաց տալ իւր նուէր կամ ընթերցարան :

Կը գտնուի Զարգարեան գործարանի Սուլթան Համամ Թիւ 14, և ամեն Հայ գրափաճառաց քով :

Բարձրանալ կարգաւորին գինն է 100 փր. ողջ տալ մէճիտի, իսկ ոսկեղծիւնը, որոյ մէջ գունաւոր պատկեր մ'աւելի կայ, մէկ քարթ մէճիտիէ :

ԹԱՏՐՈՆ

ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԲԱԶՄԱՊԱՏԿԵՐ

Տղայոց ընթերցանութեան յատկացեալ այս հանդէսը՝ որ աղնիւ թող թոյ արդ բազմաթիւ պատկերներով գեղեցիկ և վայելուչ ազգայնութեամբ 'ի լոյս ընծայուած է, կը պարունակէ բարդակաւին հրահանգիչ և զուարճալի նիւթեր :

Սոյն գործոյն տարեկան 24 թերթերը ամառը կազմուած, կազմուած ինչո՞ք համար ամենէն յարմար և պատուական առարկայ մ'ըլլալով, այն նպատակին ծառայեցնելու համար ալ գործոյն ստուարութեանը նայելով՝ գինը ամենաշնչին գումարի մը՝ այն է 1 ֆրանք 30 ամս գինի՝ կամ՝ որ նոյն է 6 զրշ մէճիտիէ գրամի իջած է, և կ'ընծայ փարիզու գրատունը և ամեն գրափաճառաց քով :

ԶԱՒԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ա.

Գրեց Երեսնին Գարբիլ Պատկանեան

Ընթերցատէր ազգայինք, որ անշուշտ ազգային տաղանդաւոր հեղինակին յնուշաւոր և այլ գործերը կը յիշեն, մեծ հաճութեամբ պիտի կարդան այս նոր գործը՝ որ գործեալ մեր ազգային պատմութեան անունով է :

Կը ծախուի Ս. Դ. և Կազմաճեան գրատունը՝ Էնի ճամի Զիլնիկիլէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրափաճառաց քով : Գին 1 ֆր. 50 ամսական :



ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՂԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 ՀԻՆԴՍԱԹԻ ՕՐԷՆ ՍԿԱՆԱԼ

ՄԻՆԱԿ ԳԵԿՏԵՄԲԵՐ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԽՆԵՐԸ

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

Աւելուց էլքէ

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

Աւելուց էլքէ

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

ԿԱՄՈՒՐՁԵՆ ԵՒ ՈՂ ՇՈՂԵՆԱԽՆԵՐԸ

Ե-բողոքն էլքէ

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.



ԶՐԶԱՆ

Սմբրիկայի ջրհաններ մեծ և փոքր, երկաթե հաստաւոր խողովակներով թէ ջրհաններու և թէ խորանի հորերու համար աճան գներով կը ծախուի, Կ. Պոլիս Գալաթիա Մի. նաւան և ընկերաց Սմբրիկայի մաղաղան :



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր ավանձելու կոշտած ձեւքով գործող ու անքակ կար կարող գործիք ամեն տեսակ կար մեծ գին :

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

Աւելուց էլքէ

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

Աւելուց էլքէ

Table with 3 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

ԻՍԿԻԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԽՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ, Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.

ՈՒՐԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ, Ժամ, Ե-բողոքն էլքէ, Թիւ. containing ship schedule data.



ՍՈՒԹԻՆ ԵՒ ՇԻՐՈՔ

Յայտնի է որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը գրեթէ չարունակ փորի յաւ. փորհարութիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն ֆնալ, չղային գրգռութիւն և այլն կուենան, մանուկը գ. աղւա հանելու միջոցին, և այս ներգործիւններն ալ աւելի կը ստատկանան ամառան տաք եղանակին : Սուրինկ Շիրօքը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջըր կառնէ ու կը բըժըլի, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ յարախութիւն մեծ իւր ծնողաց : Գարծած ողները շատ դոհ են : Ուղղող կրնայ փրծել. գինն ալ ժան է. նորածին երախայի կաթիլով կը արուի, վեց ամիսէն վեր եղաղին օրը երեք անաւի գրգռ. կը ծախուի Կ. Պոլիս Գալաթիա Մի. նաւ և ընկերաց Սմբրիկայի մաղաղան :

Աս լրագիրը չարախի երեք անգամ կը հրատարակուի, երեք քաթիլ, հինգ քաթիլ և չարախ օրերը, Բաժանորդագրութեան տեղին են Գալաթիա Կանաքըճըլար ճատտէսի թիւ 498, Նօրս իստ Մ. Կաթիլ խմբագրատունը :

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուց սենեակները :

- ԻՋՄԻՐ. Խալիսն աղա Տէմեհան. ՆԻՍՈՒՐԻՒՍ. Խաթալ Էֆ. Կաթիլեան. ՊՐՈՒՍ. Խալիսն աղա Թափեկեան. ԹԷՔԵՏԱՂ. Բաթակիլ աղա Ուղաւն. արդեան : ՏՐԱՊԻԶՈՆ. Խալիսն աղա Կաթիլեան ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան. ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան. ՄՈՒՆ. Մկրտիչ աղա Փոթիկեան. ԵԱՏ. Մ. աղա Խալիկեան. ՅՈՒՅՆԱ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատեան ԵՐԶՆԱՅ. Թաղեալ աղա Բաղդասարեան : ՄԱՐԱՇԻՍՏԱՆ. Ործ. Տ. Ուրալեան : Երբեք գաղաթներէ ստուարութիւն ու չղային տա անգերէն մէկուն հետ կրնան կ'գիտցիր :

ԽԻՐԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Ս. Ս. ԻԹԻՒՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱԿԻ ՄԻՆԱԿ ԻՐԱԳՐՈՑ ԳԱԼԱՏԱ ՆՕՐՈ ԵՆՆ